ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3507-Ա « 28 » օգոստոսի 2025 թ.

ԱՎԱՆ-ԱՌԻՆՋ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ Հ. 3/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության Երևանի ԳԳՄ մասնաճյուղի տնօրեն՝ Վ. Արտաշեսյանի գրությունը՝ Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.3/14 հասցեում գտնվող 291.0քմ մակերեսով տարածքի համար /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.31102022-01-0065 վկայական/ կնքված անշարժ գույքի մասի վարձակալության վերաբերյալ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու, պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին:

Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.3/14 հասցեում գտնվող շենքը՝ սեփականության իրավունքով պատկանում է Երևան համայնքին /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.16012018-01-0032 վկայական/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման հավելվածով, հաշվի առնելով 2009 թվականի մարտի 24-ին կնքված անշարժ գույքի մասի վարձակալության վերաբերյալ հ.682 պայմանագիրը, «Ֆեռե» ՍՊԸ-ի կողմից 02.06.2025թ. ներկայացված անշարժ գույքի վարձակալության արժեքի գնահատման հ.ԱԳՎ-25.05.25 հաշվետվությունը.

1.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության հետ կնքել համաձայնագիր՝ Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.3/14 հասցեում գտնվող՝ 291.0քմ մակերեսով տարածքի համար 2009 թվականի մարտի 24-ին կնքված անշարժ գույքի մասի վարձակալության վերաբերյալ հ.682 պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին, ներառելով հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) պայմանագրի 4.1 ենթակետը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2028 թվականի հուլիսի 1-ը:».

2) պայմանագրի 4.2 ենթակետում՝ «523000 (հինգ հարյուր քսաներեք հազար)» բառերը փոխարինել «611100 (վեց հարյուր տասնմեկ հազար հարյուր)» բառերով.

3) համաձայնագրով սահմանված փոփոխությունը կիրառվում է կողմերի միջև 2025 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 1-ին կետով նշված համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պետական գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ